ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հյուսիս Հայկական Փայատիրական Բանկ»

Փայատերերի ընդհանուր ժողովի

01/11/1993թ. որոշմամբ /թիվ 1 արձանագրություն /

Փոփոխված է՝

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Բաժնետերերի

ընդհանուր ժողովի՝ 23.12.2024թ. N9 որոշմամբ

/թիվ 5 արձանագրություն/

Ժողովի նախագահ՝

Մարսելո Վենդե

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

Մարտին Գալստյան

Digitally signed by Martin Galstyan
Date: 2025.02.10 16:17:41 AMT
Reason: Գրանցված է 29.01.2025թ.

(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

/ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ/

2024թ.

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Կոնվերս փայատիրական բանկը» ստեղծվել է 1993 թվականի նոյեմբերի 01-ին որպես «Հյուսիս Հայկական Փայատիրական Բանկ» բանկի հիմնադիրների ժողովի որոշմամբ: Բանկը վերակազմավորվել է **«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության,** այսուհետ՝ «Բանկ», հիմնադիրների ընդհանուր ժողովի թիվ 4 որոշմամբ՝ համաձայն «26» ապրիլի 1997թ. արձանագրության:

1.2. Բանկը հանդիսանում է «Կոնվերս փայատիրական բանկի» իրավահաջորդը:

1.3. Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է /այսուհետ՝ «Կանոնադրություն»/, որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետերերի և կառավարման մարմինների համար: Իր գործունեության ընթացքում Բանկը ղեկավարվում է ՀՀ նորմատիվ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Բանկի գործունեությունը կանոնակարգող իրավական այլ ակտերով:

1.4. Բանկը համարվում է շահույթ ստանալու նպատակ հետապնդող /առևտրային/ իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը կազմված է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքի հանրագումարից:

1.5. Բանկի իրավունակությունը և գործունակությունը ծագում են վերջինիս ստեղծմամբ /պետական գրանցման պահից/ և դադարում են լուծարմամբ /լուծարման մասին պետական գրանցամատյանում գրառման պահից/:

1.6. Բանկի բաժնետերերի և Բանկի միջև հարաբերությունները կարգավորվում են Կանոնադրությամբ:

1.7. ՀՀ Կառավարությունը և Բանկը պատասխանատու չեն միմյանց պարտավորությունների համար, եթե վերջիններս այդպիսիք չեն ստանձնել: ՀՀ կենտրոնական բանկն ու Բանկը միմյանց պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում:

1.8. Բանկն իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն և ՀՀ օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեության լիցենզիա ստանալու պահից:

1.9. Բանկը ՀՀ և նրա տարածքից դուրս կարող է հիմնել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք ՀՀ տարածքում հիմնելու դեպքում գրանցվում են ՀՀ նորմատիվ օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ նրա տարածքից դուրս՝ տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները:

1.10. Բանկը հաստատում է իր մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները, որտեղ սահմանվում են նրանց լիազորությունները և լուծարման կարգը:

1.11. Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, գրանցումը և լուծարումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.12. Բանկի մասնաճյուղը Բանկի՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող Բանկի առանձնացված ստորաբաժանումն է, որը գործում է Բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից իրականացնում է բանկային գործունեություն և /կամ/ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական այնպիսի գործառնություններ /ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով/, որոնք նախատեսվում են մասնաճյուղի կանոնադրությամբ:

1.13. Բանկի ներկայացուցչությունը՝ Բանկի իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող Բանկի առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է Բանկը երրորդ անձանց հետ փոխհարաբերություններում, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, Բանկի անունից կնքում պայմանագրեր, իրականացնում համանման այլ գործառույթներ:

Բանկի ներկայացուցչությունը չի կարող իրականացնել բանկային գործունեություն և օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ:

1.14. Բանկը կարող է ժամանակավորապես դադարեցնել իր մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:

1.15. Բանկի մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների գործունեության դադարեցման կարգը սահմանվում է ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և/կամ մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրությամբ:

1.16. Բանկը երաշխավորում է իր հաճախորդների՝ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումը օրենքով սահմանված կարգով:

1.17. Բանկի հաճախորդների հաշիվների և վերջիններիս կողմից Բանկին հանձնված դրամական միջոցների և այլ գույքի վրա կարող է արգելանք դրվել, առգրավում կամ բռնագանձում տարածվել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ իրավասու պետական մարմինների որոշմամբ: Բանկը պատասխանատվություն չի կրում օրենսդրությամբ նախատեսված կարգով արգելանքի, առգրավման կամ բռնագանձման հետևանքով հաճախորդի կրած վնասների համար:

1.18. Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով /միջոցներով/, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

1.19. Բանկն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք /միջոցներ/, իր ֆիրմային անվամբ /անգլերեն գրառմամբ/ և խորհրդանիշով կլոր կնիք, դրոշմներ, ձևաթղթեր, անկյունային դրոշմակնիք և համարային կնիքներ Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների համար:

1.20. Բանկի գտնվելու վայրը (թղթակցային հասցեն) նրա մշտական գործող մարմնի /գլխավոր գրասենյակի/ գտնվելու վայրն է: Բանկի գտնվելու վայրը և փոստային հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Վ.Սարգսյան փող. թիվ 26/1:

1.21. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն - *«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն*
ռուսերեն - *закрытое акционерное общество “Конверс Банк”*
անգլերեն - *“Converse Bank” closed joint-stock company:*

Բանկի կրճատ անվանումն է՝

հայերեն - *«Կոնվերս Բանկ» ՓԲԸ*
ռուսերեն - *ЗАО “Конверс Банк”*
անգլերեն - *“Converse Bank” CJSC:*

1.22. Բանկը կրում է ՀՀ օրենսդրությամբ բանկերին վերապահված իրավունքներ ու պարտականություններ, անկախ դրանք Կանոնադրությամբ նախատեսված լինելու կամ չլինելու փաստից, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

1.23. Բանկի բաժնետերերի ռեեստրը վարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.24. Բանկը բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ է իրականացնում գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում:

Հոդված 2. Բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունները և այլ գործարքները

2.1. Բանկը ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները՝

ա/ ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ,

բ/ տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,

գ/ տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ /վարկային նամակներ/,

դ/ բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ,

ե/ մատուցել վճարահաշվարկային ծառայություններ և /կամ/ այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները,

զ/ թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, վճարային փաստաթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր և այլ գործիքներ, կատարել նման այլ գործառնություններ,

է/ իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն,

է.1) օրենքով սահմանված պահանջները բավարարելու դեպքում իրականացնել ներդրումային ֆոնդի (ներառյալ՝ կենսաթոշակային ֆոնդի) պահառության գործունեություն.

ը/ մատուցել ֆինանսական գործակալի /ներկայացուցչի/ ծառայություններ,

կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները /հավատարմագրային (լիազորագրային) կառավարում/,

թ/ գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային /ստանդարտացված/ ձուլակտորներ և հուշադրամներ,

ժ/ գնել և վաճառել /փոխանակել/ արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,

ժա/ իրականացնել ֆինանսական վարձակալություն /լիզինգ/,

ժբ/ ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

ժգ/ մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն,

ժդ/ ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,

ժե/ իրականացնել «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվի օպերատորի գործառույթներ,

2.2. Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է բանկային գործունեություն իրականացնելու համար:

2.3. Բանկը ֆինանսական գործառնությունները կատարում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2.4. Բանկն իրավունք ունի իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցվոր և պատասխանող դատարանում ու միջնորդ դատարանում:

2.5. Բանկն իրավունք ունի ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով թղթակցային հաշիվներ բացել ՀՀ-ում և արտասահմանում գործող բանկերում:

2.6. Բանկն ինքն է որոշում ներգրավվող ավանդների, իր կողմից տրամադրվող վարկերի, սեփական արժեթղթերի տոկոսադրույքները և իր ծառայությունների միջնորդավճարների չափը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

2.7. Բանկն իրավունք ունի իրականացնել Կանոնադրության 2.1 կետում ուղղակիորեն չնախատեսված գործառնություններ, եթե դրանք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության կամ ֆինանսական գործառնությունների հետ, եթե այդպիսի

գործառնություններ սահմանվել են բանկերի համար կամ առկա է ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությունը: Եթե այդ գործառնությունները ենթակա են պետական լիազորված մարմնի կողմից լիցենզավորման, ապա Բանկը վերջիններս կարող է իրականացնել բացառապես համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

Հոդված 3. Բանկի իրավունքներն ու պարտականությունները

3.1. *Բանկն իրավունք ունի՝*

3.1.1. ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,

3.1.2. ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, ՀՀ-ում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,

3.1.3. օտարել, ֆինանսական վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,

3.1.4. շահույթի մի մասը փոխանցել կանոնադրական կապիտալ՝ տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնելով կանոնադրական կապիտալը, միայն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո,

3.1.5. օրենսդրությամբ սահմանված կարգով վճարովի ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի ու քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում, նրանց օրենսդրությանը համապատասխան, իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք կամ անդամակցել դրանց, օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.2. *Բանկը պարտավոր է՝*

3.2.1. ՀՀ օրենսդրությամբ և/կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել հաշվետվություններ ՀՀ լիազորված պետական մարմիններ,

3.2.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել աշխատանքային պայմանագրեր /համաձայնագրեր/ Բանկի աշխատակիցների հետ,

3.2.3. պատասխանատվություն կրել կնքած պայմանագրերը չկատարելու կամ անպատշաճ կատարելու, այլ անձանց իրավունքը խախտելու համար՝ հատուցելով իր կողմից հասցված վնասները,

3.2.4. ապահովել Բանկի փաստաթղթերի /Բանկի կանոնադրության, գույքի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթերի, Բանկի օրական, շաբաթական, ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման և գործադիր մարմինների նիստերի արձանագրությունների, ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի/ պահպանումը,

3.2.5. կրել ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

Հոդված 4. Բանկի գույքը

4.1. Բանկը հանդիսանում է սեփականատեր՝

4.1.1. այն գույքի, ներառյալ դրամական միջոցների, որոնք Բանկի հիմնադիրները, բաժնետերերը որպես բաժնետոմսերի դիմաց վճարումներ, կամ այլ պայմանավորվածությամբ հանձնել են Բանկին,

4.1.2. ստացված եկամուտների,

4.1.3. չբաշխված շահույթի,

4.1.4. գործող օրենսդրությամբ չարգելված հիմունքներով ձեռք բերված այլ գույքի:

4.2. Բանկի սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել Բանկին:

4.3. Բանկի՝ իր գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, այդ գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու առանձնահատկությունները, սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

Հոդված 5. Բանկի կանոնադրական կապիտալը, այլ հիմնադրամներ.

5.1. Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 19.947.633.300 (տասնինը միլիարդ ինը հարյուր քառասունյոթ միլիոն վեց հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:

5.2. Բանկի կանոնադրական կապիտալը բաղկացած է տեղաբաշխված 66.492 (վաթսունվեց հազար չորս հարյուր իննսուներկու) հատ սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 333 (երեք հարյուր երեսուներեք) հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք ամբողջությամբ տեղաբաշխված են:

5.3 Բանկի հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափը կազմում է 100,000 (մեկ հարյուր հազար) հատ սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով և 333 (երեք հարյուր երեսուներեք) հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմս, յուրաքանչյուրը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով:

5.4. Բանկի կանոնադրական կապիտալը որոշում է Բանկի պարտատերերի շահերը երաշխավորող Բանկի գույքի նվազագույն չափը: Բանկի կանոնադրական կապիտալի նվազագույն չափը չի կարող պակաս լինել ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով սահմանված չափից:

5.5 Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են Բանկի բաժնետերերին:

5.6. Բանկն իրավունք ունի Բանկի Խորհրդի /այսուհետ՝ Խորհուրդ/ որոշմամբ բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը, եթե նախկինում թողարկված բաժնետոմսերն իրացվել և լրիվ վճարվել են:

5.7. Բանկի կանոնադրական կապիտալի մեծացումը կարող է կատարվել նաև.

ա/ Բանկի բաժնետերերի կողմից դրամական միջոցների լրացուցիչ ներդրումների հաշվին,

բ/ երրորդ անձանց կողմից դրամական միջոցների ներդրումների հաշվին,

գ/ չբաշխված շահույթի հաշվին:

5.8. Բանկի բաժնետերերի լրացուցիչ կամ երրորդ անձանց ներդրումների, ինչպես նաև չբաշխված շահույթի հաշվին Բանկի կանոնադրական կապիտալի մեծացման մասին որոշումն ընդունվում է Խորհրդի կողմից, որով սահմանվում է լրացուցիչ ներդրումների գումարային արժեքը և ներդրումների կատարման կարգն ու ժամկետները: Կանոնադրական կապիտալի մեծացման դեպքում Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը /այսուհետ՝ Ժողով/ պարտավոր

է որոշում ընդունել Կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու կամ Կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

5.9. Բանկի կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ուժի մեջ է մտնում Բանկի Կանոնադրության մեջ այդ կապակցությամբ կատարված համապատասխան փոփոխությունները ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցվելու պահից:

5.10. Բանկը բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով չի կարող ավելացնել կանոնադրական կապիտալն ավելի, քան Ժողովի հաստատած վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

5.11. Արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը կանոնադրական կապիտալում չի կարող 25 %-ից ավել լինել:

5.12. Բանկի փաստացի համալրված կանոնադրական կապիտալի նվազեցումն արգելվում է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5.13. Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ փաստացի համալրված կանոնադրական կապիտալի 20 %-ի չափով:

5.14. Պահուստային հիմնադրամը ձևավորվում է Բանկի շահույթից՝ մինչև սահմանված չափերին հասնելը: Պահուստային հիմնադրամին հատկացումները կատարվում են տարեկան մաքուր շահույթից 20% և բարձր չափով, ինչպես նաև Բանկի նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

5.15. Պահուստային հիմնադրամը օգտագործվում է միայն Խորհրդի որոշմամբ՝ Բանկի կորուստները ծածկելու, ինչպես նաև Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը մարելու համար, եթե Բանկի շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

5.16. Բանկի էմիսիոն եկամուտը կարող է օգտագործվել միայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի համաձայն կանոնադրական կապիտալը նվազեցնելու դեպքում կամ բանկի անվճարունակության դեպքում կորուստները ծածկելու նպատակով կամ կարող է ուղղվել բանկի բաժնետոմսերի (բաժնեմասերի) անվանական արժեքի ավելացմանըկանոնադրական կապիտալը նվազեցնելու դեպքում կամ բանկի անվճարունակության դեպքում կորուստները ծածկելու նպատակով կամ կարող է ուղղվել բանկի բաժնետոմսերի (բաժնեմասերի) անվանական արժեքի ավելացմանը:

5.17. Բանկը իրավական ակտերով սահմանված կարգով ստեղծում է ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստ, վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ /պահուստաֆոնդեր/, ինչպես նաև ՀՀ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված ու պարտադիր այլ պահուստներ:

5.18. Ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ պահուստներ /ֆոնդեր/, որոնք նպատակ ունեն նպաստել Բանկի տնտեսական զարգացմանը և Բանկի աշխատողների սոցիալ-տնտեսական պահանջմունքների բավարարմանը:

5.19. Այլ պահուստների /ֆոնդերի/ ձևավորումն ու օգտագործումը, դրանց հատկացումների կարգը և չափերը որոշվում են Ժողովի կողմից:

Հոդված 6. <u>Բանկի բաժնետոմսերը և այլ արժեթղթերը</u>

6.1. Բանկը կարող է թողարկել փաստաթղթային ձևի՝ /տպագրական եղանակով պատրաստված/ հասարակ /սովորական/, ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր: Ընդ որում, բաժնետոմսերի թողարկման փաստաթղթային ձևը բաժնետոմսերի հավաստագիրն է:

6.2. Բանկի կողմից թողարկված բաժնետոմսերը բաժնետերերի միջև տեղաբաշխվում են փակ բաժանորդագրության ձևով դրանց անվանական արժեքով կամ Խորհրդի կողմից

օրենքով սահմանված կարգով որոշվող շուկայական արժեքով, որը չի կարող պակաս լինել բաժնետոմսերի անվանական արժեքից:

6.3. Բանկն իրավունք ունի լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխել դրանց շուկայական արժեքից ցածր, եթե տեղաբաշխումն իրականացվում է Բանկի հասարակ /սովորական/ բաժնետոմսեր ունեցող բոլոր բաժնետերերի կողմից նման բաժնետոմսեր ձեռք բերելու նախապատվության իրենց իրավունքն իրականացնելիս:

6.4. Բաժնետոմսերը վճարվում են ՀՀ դրամով:

6.5. Բանկի բաժնետոմսերի դիմաց վճարման միջոց կարող են լինել միայն դրամական միջոցները:

6.6. Բանկի լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում:

6.7. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով կարող են մասնակցել Բանկի գործերի կառավարմանը հասարակ /սովորական/ բաժնետոմսերի սեփականատերերի հետ հավասար իրավունքներով:

6.8. Տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքը սահմանված ժամկետում լրիվ չվճարելու դեպքում՝

ա/ եթե փաստացի վճարված գումարը մեկ բաժնետոմսի արժեքից պակաս է, ապա բաժնետոմսերն անցնում են Բանկի տրամադրության տակ, իսկ բաժնետերը զրկվում է բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքից և փաստացի վճարված գումարի պահանջի իրավունքից,

բ/ եթե փաստացի վճարված գումարը մեկ բաժնետոմսի արժեքից պակաս չէ, ապա կատարվում է բաժնետոմսերի քանակի վերահաշվարկ, և բաժնետերը ստանում է փաստացի վճարած իր գումարին համապատասխան արժեքի բաժնետոմսեր, իսկ մնացած բաժնետոմսերն անցնում են Բանկի տրամադրության տակ:

Սույն կետով նախատեսված կարգով Բանկի տրամադրության տակ անցած բաժնետոմսերը կարող են տեղաբաշխվել մնացած բաժնետերերին, որոնք պարտավոր են 3 ամսվա ընթացքում լրիվ վճարել դրանց արժեքը: Մյուս բաժնետերերի կողմից նշված բաժնետոմսերը 3 ամսվա ընթացքում ձեռք չբերելու դեպքում Բանկը պարտավոր է նվազեցնել կանոնադրական կապիտալի հայտարարված չափը ձեռք չբերված բաժնետոմսերի արժեքի չափով:

6.9. Բանկի տրամադրության տակ անցած բաժնետոմսերը չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, այդ բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկվում:

6.10. Բանկի բաժնետոմսերը տեղաբաշխվում են Բանկի բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման տեսքով:

6.11. Բանկը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր տնտեսական գործունեությամբ առաջացած վնասները ծածկելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը ճանաչվում է անվճարունակ և դրա հիմքով հաստատված Բանկի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված է նոր բաժնետոմսերի թողարկում:

6.12. Բանկը կարող է թողարկել և տեղաբաշխել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արժեթղթեր՝ պահպանելով արժեթղթերի շուկան կարգավորող ՀՀ նորմատիվ իրավական ակտերի պահանջները:

6.13. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումը կատարվում է Խորհրդի որոշմամբ, որում սահմանվում են դրանց մարման կարգը, ժամկետները և պայմանները: Բանկի պարտատոմսերը կարող են լինել անվանական: Պարտատոմսեր կարող են թողարկվել Բանկի կանոնադրական կապիտալի լրիվ վճարումից հետո:

6.14. Բանկի բաժնետոմսերի, անվանական պարտատոմսերի և այլ անվանական արժեթղթերի նկատմամբ նոր սեփականատիրոջ սեփականության իրավունքը ծագում, իսկ նախկին սեփականատիրոջ իրավունքը դադարում է բաժնետերերի և անվանական այլ արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում համապատասխան փոփոխություն /գրանցում/ կատարելուց հետո:

6.15. Բանկի թողարկած բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չի կարող գերազանցել Բանկի կանոնադրական կապիտալը, կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Բանկին պարտատոմսեր թողարկելու նպատակով:

Հոդված 7. Բանկի բաժնետերերը

7.1. Բանկի կանոնադրական կապիտալի ձևավորմանը կարող են մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք:

7.2. Բանկի բաժնետերերը կարող են փոփոխվել Կանոնադրությամբ սահմանված կարգով՝ բաժնետերերի կողմից իրենց պատկանող բաժնետոմսերի օտարման միջոցով, ինչպես նաև բաժնետիրոջ /բաժնետերերի/ բոլոր բաժնետոմսերի վրա բռնագանձում տարածելու դեպքում:

7.3. Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, եթե այդպիսիք չի ստանձնել: Բանկի բաժնետերերը Բանկի գործունեության արդյունքում գոյացած վնասների համար պատասխանատվություն են կրում Բանկի կանոնադրական կապիտալում իրենց ունեցած բաժնեմասի սահմաններում: Բաժնետոմսերի դիմաց վճարումները ոչ լրիվ կատարած բաժնետերը Բանկի պարտավորությունների համար կրում է համապարտ պարտավորություն նաև բաժնետոմսերի դիմաց իր կողմից չվճարված գումարի սահմաններում:

7.4. Կատարման համար Բանկին պարտադիր ցուցում տալու իրավունք կամ նրա գործունեությունը այլ կերպ կանխորոշելու հնարավորություն ունեցող բաժնետերը Բանկի անվճարունակության դեպքում նրա պարտավորությունների համար կրում է լրացուցիչ /սուբսիդիար/ պատասխանատվություն, եթե վերջինս իր հիշյալ իրավունքը կամ հնարավորությունն իրագործելիս նախօրոք իմացել է, որ դրա հետևանքով Բանկը կհայտնվի օրենքով նախատեսված անվճարունակության վիճակում:

7.5. Ժողովում ձայնի իրավունքից օգտվում են միայն հասարակ /սովորական/ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը, բացառությամբ օրենքով և Կանոնադրությամբ սահմանված դեպքերի: Մինչև բաժնետոմսերի արժեքի լրիվ վճարումը բաժնետերը չի օգտվում ձայնի իրավունքից:

7.6. Բանկի հայտարարված բաժնետոմսերը տեղաբաշխելիս սովորական բաժնետոմսի սեփականատեր բաժնետերերը կարող են ձեռք բերել նոր բաժնետոմսեր իրենց մասնակցությանը համապատասխան քանակով միայն այն դեպքում, եթե Կանոնադրությա նախատեսված արտոնյալ փոխարկելի բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը հրաժարվում են հայտարարված բաժնետոմսերի ձեռք բերման իրենց նախապատվության իրավունքի իրականացումից:

7.7. Բանկի հասարակ /սովորական/ բաժնետոմսերի սեփականատերերն ունեն Կանոնադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում տեղաբաշխվող հասարակ /սովորական/ բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունք:

7.8. Բանկի բաժնետերերի կողմից Կանոնադրության 7.6 և 7.7 կետերով նախատեսված իրավունքից հրաժարվելու դեպքում Ժողովի որոշմամբ դրանք փակ բաժանորդագրությամբ կարող են տեղաբաշխվել երրորդ անձանց միջև:

7.9. Բանկի բաժնետերը պարտավոր է՝

ա/ Կանոնադրությամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իր բաժնետոմսերի արժեքը,

բ/ չհրապարակել Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները, որոնց ցանկը սահմանում է Բանկի խորհուրդը,

գ/ Խորհրդին և Բանկի աուդիտն իրականացնող անձին տրամադրել օրենքով սահմանված տեղեկություններ Բանկի գործարքներում իր շահագրգռվածության, Բանկի հետ գործարք իրականացնող անձանց հետ իր փոխկապակցվածության մասին,

դ/ ենթարկվել Կանոնադրության այլ պահանջներին:

7.10. Բանկի հասարակ /սովորական/ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի՝

ա/ մասնակցել Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ենթարկվելով Կանոնադրության 7.5 և 7.20 կետերի սահմանափակումներին,

բ/ մասնակցել Բանկի կառավարմանը, ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ մասնակցող անձի մասնագիտական որակավորման վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի դրական եզրակացության առկայության դեպքում,

գ/ ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից, ենթարկվելով Կանոնադրության 7.20 կետի սահմանափակմանը,

դ/ առաջնահերթ կարգով ձեռք բերել Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ,

ե/ ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից և տեղեկություններից բացի, այդ թվում՝ Կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Բանկի ֆինանսական գործունեությանը, ստանալու Բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները, ինչպես նաև հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները: Իսկ Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 2% և ավելիին տիրապետող բաժնետերն իրավունք ունի ստանալ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկությունները նույն հոդվածով սահմանված կարգով:

զ/ Ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,

է/ հանդես գալ առաջարկություններով Ժողովներում,

ը/ Ժողովներում քվեարկել իրեն պատկանող քվեարկող բաժնետոմսերի ձայների չափով,

թ/ դիմել դատարան՝ Ժողովի կողմից ընդունված և գործող ՀՀ նորմատիվ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

ժ/ Բանկի սեփական միջոցների հաշվին կանոնադրական կապիտալն ավելացնելիս Խորհրդի կողմից որոշված գնով, բայց ոչ պակաս անվանական արժեքից, ձեռք բերել համապատասխան քանակությամբ հասարակ /սովորական/ բաժնետոմսեր,

ժա/ Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի /միջոցների/ իրեն հասանելիք մասը,

ժբ/ նախապատվության իրավունքով նույն գնով, որով այն բաժնետերերի կողմից վաճառվում է և այլ հավասար պայմաններով ձեռք բերել վաճառվող բաժնետոմսերը՝ պահպանելով Կանոնադրության 7.14 կետի պահանջները,

ժգ/ Բանկի կանոնադրական կապիտալում իր բաժնետոմսերը կամ դրա մի մասը վաճառել կամ այլ ձևով զիջել Բանկի մեկ կամ մի քանի բաժնետերերի, ինչպես նաև երրորդ անձանց՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված կարգը,

ժդ/ ունենալ Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

7.11. Բանկը հասարակ /սովորական/ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերին չի երաշխավորում հասարակ /սովորական/ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները:

7.12. Բանկի արտոնյալ փոխարկելի բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի՝

ա/ Ժողովում մասնակցել ձայնի իրավունքով, եթե քննարկվում են Բանկի վերակազմակերպման կամ լուծարման հարցերը, Կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այն որոշումները, որոնք սահմանափակում են իր իրավունքները,

բ/ արտոնյալ փոխարկելի բաժնետոմսերի ձեռք բերման պահից մեկ տարվա ընթացքում պահանջել դրանց փոխարկում հասարակ /սովորական/ բաժնետոսերի, առաջնահերթության իրավունքով ձեռք բերել Բանկի կողմից տեղաբաշխվող հայտարարված բաժնետոմսերը, արտոնյալ բաժնետոմսերը՝ հավասար քանակային հարաբերակցությամբ փոխարկելով հասարակ /սովորական/ բաժնետոմսերի և Կանոնադրությամբ սահմանված ժամկետներում վճարելով լրացուցիչ տեղաբաշխվող հասարակ /սովորական/ բաժնետոմսերի շուկայական արժեքի և արտոնյալ փոխարկվող բաժնետոմսերի անվանական արժեքի ու վերջիններիս հասանելիք շահութաբաժնի գումարի տարբերությունը,

գ/ իրավասու մարմնի կողմից շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման դեպքում ստանալ տարեկան հաստատագրված շահութաբաժին իրենց պատկանող արտոնյալ փոխարկելի բաժնետոմսի անվանական արժեքի 20%-ի չափով,

դ/ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում մասնակցել Բանկի գործերի կառավարմանը՝ մասնակցող անձի մասնագիտական որակավորման վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի դրական եզրակացության առկայության դեպքում,

ե/ հանդես գալ առաջարկություններով Ժողովներում,

զ/ Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

է/ Բանկի չբաշխված շահույթի հաշվին կանոնադրական կապիտալն ավելացնելիս Խորհրդի կողմից որոշված գնով, բայց ոչ պակաս անվանական արժեքից, ձեռք բերել համապատասխան քանակությամբ հասարակ /սովորական/ բաժնետոմսեր:

7.13. Արտոնյալ փոխարկելի բաժնետոմսի սեփականատեր բաժնետերը Կանոնադրության 7.12 կետում նշված իրավունքներից օգտվում է Կանոնադրության դրույթներին համապատասխան, իսկ Կանոնադրության 7.10 կետի բ, ե, զ, թ, ժ, ժա, ժբ և ժգ ենթակետերով սահմանված իրավունքներից՝ հասարակ /սովորական/ բաժնետոմսերի սեփականատերերի հետ հավասար իրավունքներով:

7.14. Արտոնյալ փոխարկելի բաժնետոմսերի սեփականատերերը կրում են Կանոնադրության 7.9 կետով սահմանված պարտականությունները:

7.15. Բանկի բաժնետերերն ունեն իրենց սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը /դրանց մասը/ օտարելու կամ օրենքով չարգելված ձևով դրանք այլ անձանց փոխանցելու իրավունք:

Բաժնետոմսերի փոխանցումը կատարվում է հետևյալ կերպ.

ա/ մյուս բաժնետերերն ունեն այդ բաժնետոմսերը գնելու նախապատվության իրավունք, որի ժամկետը սահմանվում է 30 /երեսուն/ օր՝ սկսած բաժնետոմսերի վաճառքի առաջարկման պահից: Վաճառքի առաջարկման պահ է հանդիսանում այդ մասին բաժնետիրոջ կողմից Բանկին համապատասխան հաղորդում ուղարկելու պահը:

բ/ Բանկը պարտավոր է բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերը վաճառելու առաջարկությունը ստանալու պահից 7 օրվա ընթացքում այդ մասին ծանուցել մնացած բաժնետերերին՝ նշելով նախապատվության իրավունքի իրականացման ժամկետի ավարտը և դրան չարձագանքելու հետևանքները:

գ/ Եթե բաժնետերերից որևէ մեկը սույն կետում սահմանված ժամկետում չի օգտվում իր նախապատվության իրավունքից, ապա բաժնետոմսերի օտարումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.16. Բաժնետերերի նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը չի կիրառվում այն դեպքում, երբ իրենց բաժնետոմսերը կամ դրանց մի մասը օտարելու ցանկություն են հայտնել Բանկի բոլոր բաժնետերերը միաժամանակ: Բանկի բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում հաշվի է առնվում Բանկի զուտ ակտիվների մեծությունը: Այդ դեպքում կողմերից որևէ մեկի պահանջով պետք է բաժնետոմսերի արժեքը /կամ Բանկի զուտ ակտիվների մեծությունը/ սահմանվի անկախ գնահատողի /աուդիտի/ կողմից:

7.17. Բանկի բաժնետերերը կարող են իրենց սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերն օտարել բացառապես ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.18. Բանկի բաժնետոմսերն անցնում են Բանկի բաժնետերերի ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.19. Կանոնադրությամբ կամ Ժողովի որոշմամբ հաստատված կարգով սահմանված ժամկետում ներդրումներ չկատարող բաժնետերը պարտավոր է ուշացման համար վճարել չվճարված գումարի 10 տոկոսի չափով տուգանք:

7.20. Բանկի կանոնադրական կապիտալում բաժնետիրոջ բաժնետոմսերի գրավը և հետագայում գրավառուի կողմից դրանց վրա բռնագանձում տարածելն իրականացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.21. Բանկի կանոնադրական կապիտալում բաժնետիրոջ բաժնետոմսի վրա ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և դեպքերում բռնագանձում տարածվելու ու այն սահմանված կարգով իրացվելուց հետո այդ բաժնետերը դադարում է Բանկի բաժնետեր լինելուց:

7.22. Բանկի բաժնետերը կամ նրա հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական կապիտալում կարող են ձեռք բերել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի իմաստով նշանակալից մասնակցություն /այսուհետ՝ Նշանակալից մասնակցություն/ միայն ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

7.23. Բանկի կանոնադրական կապիտալում Նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դեպքում Բանկի բաժնետերը Կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին համապատասխան իրավունքներ է ձեռք բերում և պարտականություններ է ստանձնում միայն ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնության դեպքում:

7.24. Օֆշորային տարածքներում մշտական բնակության վայր ունեցող կամ գործունեություն ծավալող ֆիզիկական անձինք, ինչպես նաև այդ տարածքներում ստեղծված կամ գրանցված իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձինք կամ սույն կետով սահմանված անձանց հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական կապիտալում մասնակցություն /անկախ մասնակցության չափից/ կարող են ձեռք բերել բացառապես Կանոնադրության 7.22 կետով սահմանված կարգով:

Սույն կետում նշված անձանց կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ ստեղծված իրավաբանական անձինք Բանկի կանոնադրական կապիտալում մասնակցություն /անկախ դրա չափից/ կարող են ձեռք բերել բացառապես Կանոնադրության 7.22 կետով սահմանված կարգով:

7.25. Բանկի բաժնետերը /բաժնետերերը/, որը /որոնք/ ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է /են/ հանդիսանում, Բանկի ֆինանսական տարվա ավարտից հետո 60 /վաթսուն/ օրվա ընթացքում, իրավունք ունի /ունեն/

երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել Բանկի տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի անդամության թեկնածուներ: Առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջարկման հիմքերը, հարցը մտցնող բաժնետիրոջ /բաժնետերերի/ ազգանունը և անունը /անվանումը/, նրան պատկանող բաժնետոմսերի քանակը՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի, և առաջարկության հեղինակի/հեղինակների/ ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլային վերարտադրությունը:

Հոդված 8. Բանկի շահույթի բաշխումը

8.1. Իր գործունեության արդյունքում Բանկի ստացած շահույթը ենթակա է հարկման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով:

8.2.ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պարտադիր վճարումները կատարելուց հետո ձևավորվում է Բանկի զուտ շահույթը, որից կատարվում են վճարումներ Կանոնադրությամբ և/կամ Ժողովի կողմից սահմանված հիմնադրամներին: Հիմնադրամներին վճարումները կատարելուց հետո կուտակված (չբաշխված) շահույթից բաժնետերերին կարող են վճարվել շահութաբաժիններ:

8.3.Խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունել միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման մասին՝ սահմանելով նաև վճարման ամսաթիվը, որը պետք է վճարվի տվյալ որոշման ընդունումից 30 օր հետո:

8.4. Տարեկան շահութաբաժինների վճարման, դրանց չափի և վճարման ամսաթվի մասին որոշումը ընդունում է Ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ:

8.5.Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

8.6. Եթե Ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

8.7. Եթե Ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերության չափով:

8.8. Ժողովն իրավունք ունի որոշում ընդունելու շահութաբաժիններ չվճարելու, իսկ Բանկի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց՝ շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին:

8.9. Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե.

ա/ լրիվ չի վճարվել Բանկի կանոնադրական կապիտալը.

բ/ շահութաբաժիններ բաշխելու պահին Բանկի կրած կորուստները /վնասները/ հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը.

գ/ Բանկի զուտ ակտիվների արժեքը պակաս է Բանկի կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

8.10. Եթե Ժողովը որոշում է կայացնում շահութաբաժիններ վճարելու մասին, ապա դրանք վճարվում են համապատասխան որոշում կայացնելուց հետո մինչև 180-րդ օրը ներառյալ, իսկ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին շահաբաժինները վճարվում են մինչև 60-րդ օրը ներառյալ: Սույն կետում սահմանված ժամկետներում շահութաբաժիններ չվճարվելու դեպքում դրանք կուտակվում և վճարվում են հետագայում բաժնետիրոջ առաջին իսկ պահանջով:

Հոդված 9. Բանկի կառավարման մարմինները

9.1. Բանկի կառավարման մարմիններն են՝

9.1.1. բաժնետերերի ընդհանուր ժողովը,

9.1.2. Բանկի խորհուրդը,

9.1.3. Բանկի Գլխավոր գործադիր տնօրենը և Բանկի Տնօրինությունը:

9.2. Ժողովը

9.2.1. Ժողովը, բանկի կառավարման բարձրագույն մարմինն է: Բանկը պարտավոր է ամեն տարի գումարել տարեկան ժողով, որը հրավիրվում է ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

9.2.2. Տարեկան ժողովից բացի անհետաձգելի հարցերի քննարկման համար կարող են գումարվել արտահերթ Ժողովներ:

9.2.3. Ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա/ Կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,

բ/ Բանկի վերակազմակերպումը,

գ/ Բանկի լուծարումը,

դ/ ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը,

ե/ Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և պաշտոնավարման ժամկետի սահմանումը /որը չի կարող մեկ տարուց պակաս լինել/, ինչպես նաև նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

զ/ հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

է/ բանկի կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

ը/ Խորհրդի ներկայացմամբ բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

թ/ բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

ժ/ Ժողովի վարման կարգի հաստատում,

ժա/ հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

ժբ/ բաժնետոմսերի համախմբումը, բաժանումը.

ժգ) Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,

ժդ) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

ժե) օրենքով նախատեսված այլ հարցեր:

9.2.4. Ժողովում ձայնի իրավունքից օգտվում են՝

ա/ Բանկի հասարակ /սովորական/ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը.

բ/ Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված դեպքերում, այսուհետ՝ «Քվեարկող բաժնետոմսեր»:

9.2.5. Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող Քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ ձայների այլ քանակ սահմանված չէ:

9.2.6. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն.

ա/ Բանկի հասարակ /սովորական/ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին համապատասխան ձայների քանակով.

բ/ Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.

գ/ Բանկի բաժնետեր չհանդիսացող Խորհրդի և Գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

դ/ Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ.

ե/ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ /եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող Ժողովի նյութերում/,

զ/ Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ:

9.2.7. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Բանկը բաժնետերերի ընդհանուր ժողովի անցկացման մասին Կենտրոնական բանկին ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

9.2.8. Տարեկան Ժողովի գումարման մասին Բանկի բաժնետերերը ծանուցվում են նշանակված օրվանից առնվազն 10 օր առաջ՝ էլեկտրոնային տարբերակով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կամ էլ առձեռն :

Ժողովի օրակարգը հաստատվում է Խորհրդի կողմից՝ հաշվի առնելով առանձին բաժնետերերի կողմից տրված առաջարկությունները:

9.2.9. Ժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությունների արդյունքում, որի արդյունքները արտացոլվում են Ժողովի արձանագրության մեջ՝ Ժողովի օրակարգում ընդգրկված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ: Քվեարկությունը Ժողովում իրականացվում է «Բանկի մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ Խորհրդի անդամների ընտրության և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

9.2.10. Ժողովի հրավիրման և անցկացման աշխատանքները կազմակերպում է Խորհրդի քարտուղարը /քարտուղարությունը/ կամ Բանկի այլ լիազորված ստորաբաժանում կամ աշխատակից /այսուհետ՝ Խորհրդի քարտուղար/:

9.2.11. Ժողովն իրավասու է, եթե Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50 տոկոսից ավելիին տիրապետող բաժնետերերը /նրանց ներկայացուցիչները/: Քվորումի բացակայության դեպքում ուղիղ 15 օր հետո հրավիրվում է նոր Ժողով: Ժողովի մասնակիցների նոր ցուցակ չի կազմվում: Օրակարգի փոփոխություն չի կատարվում:

9.2.12. Ժողովը նախագահում է Խորհրդի նախագահը, նրա բացակայության դեպքում Խորհրդի անդամներից մեկը՝ Խորհրդի անդամների ընտրությամբ /կամ Ժողովի մասնակիցների քվեարկությամբ/:

9.2.13. Ժողովների արձանագրությունները կազմում է Խորհրդի քարտուղարը: Ժողովի արձանագրությունը կազմվում է դրա ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ առնվազն 2 օրինակով, որոնք ստորագրում են Ժողովի նախագահը և Խորհրդի քարտուղարը:

Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում Ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

9.2.14. Բաժնետերերի պահանջով նրանց տրվում է արձանագրության պատճեն կամ քաղվածք նրանից:

9.2.15. Բացի տարեկան Ժողովից անհետաձգելի հարցերի քննարկման համար գումարվում են նաև արտահերթ Ժողովներ:

9.2.16. Արտահերթ Ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Բանկի գործադիր մարմնի, Բանկի աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ /բաժնետերերի/ պահանջով: Բացառությամբ Խորհրդի կողմից սեփական նախաձեռնությամբ արտահերթ Ժողովի գումարումից, մնացած դեպքերում արտահերթ Ժողովը գումարվում է արտահերթ Ժողով գումարելու պահանջ ունեցող անձի կողմից նման պահանջը ներկայացնելու պահից 45 օրվա ընթացքում: Արտահերթ Ժողովի գումարման հետ կապված հարցերը լուծվում են Խորհրդի կողմից՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջները:

9.2.17. Արտահերթ Ժողովները գումարվում են բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

9.2.18. Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկներով:

9.2.19. Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները տրամադրվում են բաժնետերերին էլեկտրոնային տարբերակով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կամ էլ առձեռն՝ Ժողովի կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ:

9.2.20. Քվեաթերթիկը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

ա. Բանկի անվանումը,

բ. Ժողովի գումարման օրը, ժամը և վայրը,

գ. քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը,

դ. քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակները՝ “կողմ”, “դեմ” և “ձեռնպահ”,

ե. լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու օրը, ժամը և վայրը,

զ. ցուցում այն մասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի բաժնետիրոջ /լիազորված ներկայացուցչի/ կողմից,

է. քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը:

9.2.21. Բաժնետերերի կողմից լրացված և ստորագրված քվեաթերթիկները ուղարկվում են Խորհրդի քարտուղարին՝ Ժողովի կայացման օրվանից երեք օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կամ էլ առձեռն:

9.2.22. Խորհրդի քարտուղարը անփոփում է քվեաթերթիկների արդյունքները և քվեարկության արդյունքում կազմում արձանագրություն: Քվեաթերթիկները կցվում են արձանագրությանը և Խորհրդի քարտուղարի կողմից զմռսվում և հանձնվում Բանկի արխիվ՝ պահպանության:

9.2.23. Ժողովների արձանագրությունների հիման վրա Ժողովի որոշումները կարող են կազմվել առանձին որոշումների տեսքով, որոնք համարակալվում են՝ նշելով Ժողովի անցկացման ամսաթիվը: Ժողովի որոշումները ստորագրվում Խորհրդի նախագահի կողմից:

9.2.24. Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

9.2.25. Որոշումների բնօրինակները պահպանվում են Խորհրդի քարտուղարի մոտ՝ մինչև սահմանված կարգով դրանք արխիվ հանձնելը:

9.2.26. Ժողովի որոշումներով սահմանված ժամկետների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, տարածման և տեղեկացման գործընթացը դրվում է Խորհրդի քարտուղարի կամ այլ լիազորված աշխատակցի վրա:

9.2.27. Ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ Ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում:

Նման կարգով Ժողովի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Բանկի Խորհրդի որոշմամբ:

9.3. <u>Խորհուրդը</u>

9.3.1. Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը օրենքով և Կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

Խորհուրդը պետք է կազմված լինի առնվազն 5 և առավելագույնը 15 անդամից: Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան Ժողովում, իսկ Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ Ժողովում՝ ներկա մասնակիցների կողմից: Ընդ որում՝ Խորհրդիանդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշում ընդունելու հետ միաժամանակ արտահերթ Ժողովում պետք է որոշում կայացվի Խորհրդի նոր անդամի ընտրության մասին:

Ժողովին Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկությունները կարող են ներկայացնել Բանկի բաժնետերերը, ինչպես նաև Խորհուրդը (բացառությամբ առաջին անգամ խորհրդի ձևավորման դեպքի):

Խորհրդի անդամներն ընտրվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

9.3.2. Խորհուրդի իրավասությանն են պատկանում՝

ա/ Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,

բ/ Ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,

գ) Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրինության անդամների, այդ թվում՝ գլխավոր հաշվապահի, Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

ե/ Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,

զ) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

է) Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը,

ը) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Բանկի մասնակիցների ռեեստրում՝ տարեկան Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ,

թ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ժողովին ներկայացումը,

ժ) Ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը,

ժա) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը,

ժբ) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

ժգ) Բանկի կողմից օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,

ժդ) Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.

ժե) Կանոնադրության 9.2.3 կետի «բ», «ժգ» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը Ժողովի քննարկմանը.

ժզ) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.

ժէ) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժը) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

ժթ) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,

ժի) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.

իա) դուստր կամ կախյալ ընկերություններին մասնակցությունը.

իբ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը.

իգ) առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը.

իդ/ գույքի շուկայական արժեքի որոշումը,

իե) օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը

իզ) Որոշում է կայացնում Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի բացակայության ժամանակ նրան փոխարինողի վերաբերյալ:

9.3.3. Ներքին վերահսկողության նվազագույն պայմաններից ելնելով՝ Խորհուրդը, բացի վերը նշված իրավասություններից, իրականացնում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված ներքին հսկողության նվազագույն պայմաններով նախատեսված իրավասություններ:

9.3.4. Խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը՝ իր, Խորհրդի անդամի, Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրինության, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 և ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջով:

9.3.5. Խորհրդի նիստերի քվորումը համարվում է ապահովված, եթե Խորհրդի նիստերին մասնակցում են Խորհրդի անդամների առնվազն 2/3–ը: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Բանկի Գլխավոր գործադիր տնօրենը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

9.3.6. Խորհրդի նիստերը նախագահում է Խորհրդի նախագահը, նրա բացակայության դեպքում՝ Խորհրդի անդամներից մեկը՝ խորհրդի անդամների ընտրությամբ:

9.3.7. Խորհրդի նախագահը հերթականությանբ ներկայացնում է օրակարգում ընդգրկված հարցերը և հրավիրում յուրաքանչյուր հարցի մասով համապատասխան զեկուցողին:

9.3.8. Հարցի վերաբերյալ զեկուցումը լսելուց հետո, անհրաժեշտության դեպքում, զեկուցողը տալիս է պարզաբանումներ Խորհրդի անդամների կողմից առաջադրվող հարցերին:

9.3.9. Զեկուցվող հարցի վերաբերյալ քննարկումներն ավարտելուց հետո Խորհրդի նախագահը, քննարկվող հարցի վերաբերյալ Խորհրդի կողմից որոշում կայացնելու համար քննարկման արդյունքում ձևակերպված առաջարկություն/ներ/ը դնում է քվեարկության:

9.3.10. Խորհրդի քվեարկության արդյունքները հաշվում և անփոփում է Խորհրդի քարտուղարը: Քվեարկության արդյունքները հայտարարվում են տվյալ Խորհրդի նիստում:

9.3.11. Խորհրդի նիստերը արձանագրվում են Խորհրդի քարտուղարի կողմից: Խորհրդի արձանագրությունը կազմվում է դրա ավարտից 10 օրվա ընթացքում՝ որոնք ստորագրում են Խորհրդի նախագահը, անդամները և քարտուղարը: Խորհրդի նիստերի արձանագրությունները ներկայացվում են ներքին աուդիտի ստորաբաժանմանը ստորագրման պահից առավելագույնը 10 օրվա ընթացքում:

9.3.12. Խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով, որոնք գումարվում են Կանոնադրությամբ հեռակա կարգով Ժողովների գումարման համար սահմանված կարգով:

9.3.13. Խորհրդի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ Խորհրդի անդամները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում:

Նման կարգով Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Բանկի Խորհրդի որոշմամբ:

9.3.14. Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Խորհրդի անդամները և Բանկի այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ: Խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

9.3.15. Խորհուրդը պատասխանատու է բանկի բնականոն և արդյունավետ գործունեության, Բանկի ակտիվների պահպանության, Բանկի բաժնետերերին, Կենտրոնական բանկին և հասարակությանը ճշգրիտ ու արժանահավատ տեղեկատվություն ներկայացնելու, ինչպես նաև Բանկի գործադիր մարմնի վերահսկման համար:

Խորհուրդը, ինչպես նաև գործադիր մարմինը, պատասխանատու են Բանկում էթիկայի նորմերի, ինչպես նաև մասնագիտական վարքագծի կանոնների ձևավորման և ներդրման համար:

9.3.16. Բանկի Խորհրդի նախագահի լիազորությունները սահմանվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով և Խորհրդի աշխատակարգով:

9.4. <u>Գործադիր մարմինը</u>

9.4.1. Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումը իրականացնում է միանձնյա գործադիր մարմնի՝ Գլխավոր գործադիր տնօրենի և Բանկի Տնօրինության (այսուհետ՝ Տնօրինություն) կողմից: Գլխավոր գործադիր տնօրենը հանդիսանում է Տնօրինության նախագահը:

9.4.2. Գլխավոր գործադիր տնօրենի և Տնօրինության իրավասությանն են պատկանում Բանկի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ Կանոնադրությամբ Ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի:

9.4.3. Գլխավոր գործադիր տնօրենի և Տնօրինության անդամների նշանակումը , ինչպես նաև նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է Խորհրդի որոշմամբ: Տնօրինության անդամները նշանակվում են և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Գլխավոր Գործադիր տնօրենի ներկայացմամբ:

9.4.4. Տնօրինության կազմում ընդգրկվում են Գլխավոր գործադիր տնօրենը, նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը, Բանկի Տնօրենները:

9.4.5. Տնօրինությունը գործում է ՀՀ օրենքների, Կանոնադրության, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված Բանկի ներքին իրավական ակտերի հիման վրա, որոնք առավել մանրամասն սահմանում են Տնօրինության նիստերի հրավիրման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը:

9.4.6. Տնօրինության նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ Գլխավոր գործադիր տնօրենի կամ Տնօրինության առնվազն 2 (երկու) անդամների նախաձեռնությամբ:

9.4.7. Տնօրինությունն իրավասու է, եթե նիստին ներկա են Տնօրինության անդամների առնվազն 1/2-ը: Որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար ձայների դեպքում Տնօրինության նախագահի ձայնը որոշիչ է:

9.4.8. Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրինության անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և/կամ Բանկի ու նրանցից յուրաքանչյուրի հետ կնքված աշխատանքային պայմանագրով: Տնօրինության անդամների հետ աշխատանքային պայմանագրերը Բանկի անունից ստորագրում է Խորհրդի նախագահը կամ Խորհրդի կողմից լիազորված այլ անձ:

Գլխավոր գործադիր տնօրենը և Տնօրինության անդամներն այլ կազմակերպություններում կարող են վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Խորհրդի համաձայնությամբ:

9.4.9. Տնօրինության իրավասությանն են պատկանում.

ա/ Բանկի կողմից կիրառվող սակագների և դրույքների սահմանումը,

բ/ Բանկի խորհրդի կողմից հաստատված քաղաքականությունների և այլ իրավական ակտերի հիման վրա կազմված Բանկի ընթացակարգերի և կարգերի հաստատումը,

գ/ Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց միջնորդավճարների սահմանումը,

դ/ ծառայությունների և բանկային գործիքների պայմանների հաստատումը,

ե/ Բանկի ակտիվների և պասիվների կառավարումը,

զ/ Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,

է/ ներքին կարգապահության կանոնների հաստատում,

ը/ աշխատանքի նկարագրերի (պաշտոնեական հրահանգների) հաստատում,

թ/ Բանկի հրապարակային պայմանագրերի տիպային ձևերի հաստատումը,

ժ/ Բանկի ընթացիկ գործունեության հետ կապված այլ՝ Գլխավոր գործադիր տնօրենի իրավասությանը չվերապահված հարցերի լուծումը:

9.4.10. Տնօրինության նիստերը կազմակերպում և վարում է Գլխավոր գործադիր տնօրենը, որն ի պաշտոնե հանդիսանում է Տնօրինության նախագահը: Վերջինիս բացակայության դեպքում Տնօրինության նիստերը կազմակերպում և վարում է Գլխավոր գործադիր տնօրենի փոխարինողը, որը հանդիսանում է Տնօրինության անդամ:

9.4.11. Տնօրինության նախագահը հերթականությանբ ներկայացնում է օրակարգում ընդգրկված հարցերը և հրավիրում յուրաքանչյուր հարցի մասով համապատասխան զեկուցողին:

9.4.12. Հարցի վերաբերյալ զեկուցումը լսելուց հետո, անհրաժեշտության դեպքում, զեկուցողը տալիս է պարզաբանումներ Տնօրինության անդամների կողմից առաջադրվող հարցերին:

9.4.13. Ձեկուցվող հարցի վերաբերյալ քննարկումներն ավարտելուց հետո Տնօրինության նախագահը, քննարկվող հարցի վերաբերյալ Տնօրինության կողմից որոշում կայացնելու համար քննարկման արդյունքում ձևակերպված առաջարկություն/ներ/ը դնում է քվեարկության:

9.4.14. Տնօրինության քվեարկության արդյունքները հաշվում և ամփոփում է Տնօրինության քարտուղարը: Քվեարկության արդյունքները հայտարարվում են տվյալ Տնօրինության նիստում:

9.4.15. Տնօրինության նիստերը արձանագրվում են քարտուղարի կողմից: Տնօրինության նիստի արձանագրությունը կազմվում է դրա ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ առնվազն 1 օրինակով, որը ստորագրում են Տնօրինության նախագահը, անդամները և քարտուղարը:

9.4.16. Տնօրինության նիստերի արձանագրությունները ներկայացվում են Խորհրդին, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ վերջիններիս պահանջով, ինչպես նաև ներքին աուդիտի ստորաբաժանմանը՝ ստորագրման պահից առնվազն 10 օրվա ընթացքում:

Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

9.4.17. Գլխավոր գործադիր տնօրենը՝

ա/ տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Բանկի անունից, այդ թվում՝ տրամադրում է բանկային երաշխիքներ,

բ/ ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս,

գ/ տալիս է լիազորագրեր,

դ/ գործում է Բանկի անունից առանց լիազորագրի,

ե/ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր,

զ/ Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները, Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալների, Բանկի գլխավոր հաշվապահի, Տնօրենների թեկնածությունները, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը,ինչպես նաև Տնօրինության կողմից հավանության արժանացած ներքին իրավական ակտերը, բացառությամբ այն ներքին իրավական ակտերի, որոնց հաստատման իրավասությունը վերապահված է Տնօրինությանը,

է/ հաստատում է Բանկի աշխատատեղերը,

ը/ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, սահմանում է աշխատակիցների պարտականությունները, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, և վերահսկում է դրանց կատարումը,

թ/ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում Բանկի աշխատակիցներին և կնքում աշխատանքային պայմանագրեր, բացառությամբ Ժողովի և Խորհրդի կողմից նշանակվող անձանցից,

ժ/ Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

ժա/ ստեղծում է մշտական և/կամ/ ընթացիկ աշխատանքային հանձնաժողովներ,

ժբ/ կազմում, ստորագրում և պետական լիազորված մարմին է ներկայացնում ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված հաշվետվություններ, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվություններ,

ժգ/ ստորագրում է Տնօրինության նիստերի արձանագրություններն ու որոշումները,

ժդ/ Բանկի անունից բացում է բանկային հաշիվներ,

ժե/ պարտավոր է Բանկի հիմնադիրների /բաժնետերերի/ պահանջով հատուցել իր կողմից Բանկին պատճառված վնասները, եթե այլ բան չի նախատեսված օրենքով կամ իր հետ կնքված աշխատանքային պայմանագրով,

ժզ/ գործում է ՀՀ իրավական ակտերի և Կանոնադրության հիման վրա.

ժէ/ իրավունք ունի առանց Ժողովի և/կամ/ Խորհրդի նախնական համաձայնության գործարքներ կնքել Բանկի անունից, եթե գործարքի գումարը չի գերազանցում Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 տոկոսը,

ժը/ կազմակերպում է Ժողովի, Խորհրդի և Տնօրինության կողմից ընդունված որոշումների կատարումը, հաշվետու է Ժողովին, Խորհրդին ու Տնօրինության և իրավունք չունի Ժողովի, Խորհրդի անդամների համար պարտադիր որոշումներ կայացնելու,

ժթ/ իրականացնում է օրենքով կամ Կանոնադրությամբ Ժողովի, Խորհրդի, ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ

ի/ կարող է ունենալ տեղակալներ, խորհրդականներ, որոնց իրավասությունները սահմանվում են Բանկի ներքին իրավական ակտերով,

իա/ արձակում է հրաման իր բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում իր պարտականությունները Բանկի Խորհրդի կողմից նշանակված տեղակալներից/ Տնօրինության անդամներից մեկի վրա դնելու մասին,

իբ/ որոշում է Բանկի պայմանագրերով հատուկ պայմաններ կիրառելու մասին,

իգ/ մինչև լուծարման հանձնաժողովի ձևավորումն իրականացնում է լուծարման հանձնաժողովի լիազորությունները,

իդ/ հաստատում է Բանկի կառավարման այլ մարմինների իրավասությանը չվերապահված ներքին իրավական ակտերը,

իե/ իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավասություններ:

9.4.18. Ներքին վերահսկողության նվազագույն պայմաններից ելնելով՝ Գլխավոր գործադիր տնօրենը, բացի վերը նշված իրավասություններից, իրականացնում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված ներքին հսկողության նվազագույն պայմաններով նախատեսված իրավասություններ:

Հոդված 10 <u>Ներքին աուդիտի ստորաբաժանում</u>

10.1. Ներքին աուդիտի ստորաբաժանման /այսուհետ՝ ներքին աուդիտ/ ղեկավարը և անդամները նշանակվում են Խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև Գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:

10.2. Ներքին աուդիտը Խորհրդի կողմից հաստատված կանոնակարգի համաձայն՝

ա) հսկողություն է իրականացնում Բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ,

բ) հսկողություն է իրականացնում Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրինության, Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Բանկի ներքին ակտերի, Գլխավոր գործադիր տնօրենին, Տնօրինության տրված հանձնարարականների կատարման նկատմամբ,

գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրած հարցերի վերաբերյալ:

Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

10.3. Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին, Տնօրինության և Գլխավոր գործադիր տնօրենին է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին,

բ) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրինության կամ Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին:

Սույն մասով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել բանկի Խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

Հոդված 11. <u>Բանկի գլխավոր հաշվապահը, հաշվառումը, հաշվետվությունը և վերահսկողությունը Բանկում</u>

11.1. Բանկի գլխավոր հաշվապահը /այսուհետ՝ Հաշվապահ/ իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

11.2. Հաշվապահը նշանակվում է Խորհրդի կողմից՝ Գլխավոր գործադիր տնօրենի ներկայացմամբ:

11.3. Հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Ժողովին, Խորհրդին, Գլխավոր գործադիր տնօրենին, Տնօրինության, ներքին աուդիտին կամ այլ անձի:

11.4. Հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ անգամ Խորհրդին, Տնօրինությանը և Գլխավոր գործադիր տնօրենին է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ Խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:

11.5. Հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի բաժնետերերին, պարտատերերին և զանգվածային լրատվության միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Կանոնադրությանը համապատասխան:

11.6. Բանկը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական հաշվետվություններ:

11.7. Բանկի գործառնական տարին սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

11.8. Բանկի գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է ՀՀ կենտրոնական բանկին, որն այդ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

11.9. Յուրաքանչյուր տարի Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Բանկը պետք է ներգրավի ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտորական կազմակերպությանը:

11.10. Անկախ աուդիտորական կազմակերպությանը հաստատում է Ժողովը: Աուդիտորարական կազմակերպության ծառայությունների համար վճարվող գումարի չափը սահմանում է Խորհուրդը, որը կնքում է աուդիտորական ծառայությունների մասին

պայմանագիրը: Բանկի անունից աուդիտորական ծառայությունների մասին պայմանագիրը կնքում է Խորհրդի նախագահը:

11.11. Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն աուդիտորական կազմակերպության կողմից կարող է իրականացվել նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով: Այս դեպքում Բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիրը կնքում և, աուդիտորական կազմակերպության ծառայությունների դիմաց վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը:

Բանկն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացության կազմումից, պետք է նախատեսի նաև Բանկի ղեկավարությանն ուղղված նամակի վերաբերյալ դրույթ:

Հոդված 12. Բանկի լուծարման կարգը

12.1. Բանկը լուծարվում է Ժողովի որոշմամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով:

12.2. Բանկի լուծարումը Ժողովի որոշմամբ կատարվում է ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությամբ: ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկի լուծարման նախնական համաձայնությունը ստանալու դեպքում Բանկը կարող է միջոցներ ձեռնարկել ավանդատուների, բանկային հաշիվների տերերի և Բանկի այլ պարտավորությունների կատարման և դադարեցման ուղղությամբ: Նշված պարտավորությունները դադարեցնելուց հետո միայն Ժողովը կարող է լուծարման մասին որոշում ընդունել:

12.3. Պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետը սահմանվում է Բանկի լուծարման մասին մամուլում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակվող հայտարարության մեջ:

12.4. Բանկի լուծարման հանձնաժողովը ստեղծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատարանի կամ ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան որոշումը կայացնելու պահից հնգօրյա ժամկետում՝ Բանկը լուծարելու, նրա գույքը /միջոցները/ վաճառելու և պարտատերերի օրինական պահանջները բավարարելու նպատակով: Լուծարման հանձնաժողովը կազմվում է առնվազն երեք անդամից: Մինչև լուծարման հանձնաժողովի ձևավորումը լուծարման հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է Գլխավոր գործադիր տնօրենը:

12.5. Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարային հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռը, որը Ժողովի կողմից հաստատվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը ներկայացնում է Կենտրոնական բանկ:

12.6. Կենտրոնական բանկի կողմից լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը Բանկի լուծարման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով տեղեկանք է հրապարակում, որից հետո լուծարային հանձնաժողովն ազատվում է Բանկի լուծարման հետ կապված պարտավորություններից:

Հոդված 13. Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը

13.1. Կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարվում են, ինչպես նաև Բանկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատվում է Ժողովի՝ ձայների առնվազն երեք քառորդով ընդունված որոշմամբ:

13.2. Կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև Բանկի՝ նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցման պահից:

Andranik Grigoryan

Digitally signed by Andranik Grigoryan
DN: c=AM, st=Yerevan, l=Yerevan, o=CONVERSE BANK CJSC, email=post@converseban k.am, cn=Andranik Grigoryan
Date: 2024.12.24 16:22:26 +04'00'